

ՄԻԻԹՈՐԵՐՆԵՑ ԶՄԻՐՈՒՆԻՈՑ ՎՆԱՇՈՒՆ ԳՊՐԱՑՈՎԱԾՆ ՔՆՆՈՒԹԵՆ ՀԱՆԳԻՒՆ

Վարժարանաց, ուսումնարաններու եւ մանկապարտեզներու ունեցած մեծ գործունեութեան ժամանակը, կրնանք ըսել թէ՛ ընդհանրապէս դպրոցական ուսումնական տարւոյ վերջին ամիսներն են: Այն օրերն՝ յորս ուսուցիչք եւ աշակերտք կը բխտին, ամէն ճիգ կը թափեն՝ յամենայնի ճերմակ երես հանդիսալու եւ գովուելու: Այն ժամերն՝ յորս ուսուցիչք հոգեբուն մէջ կը մաննեն կերպով մ'իրենց պաշտօնին՝ ուսուցչութեան մէջ ատակ ըլլալին յայտնելու, եւ աշակերտք կը ճգնին իրենց աշխատանաց արդիւնքը ցուցնելու, մէկ զմէկէ աւելի քաջ յառաջդէմ հանդիսաւարու:

Այսպիսի գործունեութիւն մը կը տեսնուէր տեղւոյս Աւստրիական բարձր պաշտպանութեան ներքեւն եղող Վիեննական Միխիթարեանց վարժարանը: Գրաւոր քննութիւններն աւարտած էին Յունիսի վերջերն եւ հրապարակական հարցաքննութիւնք սկսած, որոնց երկիցս ներկայ գտնուեցաւ տեղոյս Աւստրիական Հիւպանտս Baron von Baum, որ եւ աշակերտաց գերմաներէն լեզուի մէջ ունեցած յառաջդիմութիւնը տեսնելով ուրախ եւ գոհ՝ յարատեւութիւն մաղթեց ուսուցչաց գասուն: Իբր միջանկեալ խօսք կ'աւելցնենք թէ արգարեւ ուսուցիչք եւ աշակերտք կատարած էին իրենց պարտքը, սակայն ծնողք՝ ոչ: հրապարակական էին հարցաքննութիւնը, բայց ծնողայմէ հազիւ մէկ երկուրը փութացած էին անձամբ տեսնելու եւ ականջով լսելու իրենց զաւակաց սորվածները: Զմիւռնիացին շատ անտարբեր կը գտնուի յայսմ մասին. պատիւ ունեցած ենք բերեմն ներկայ գտնուելու նաեւ ազգային վարժարանաց հարցաքննութեան, հոն ալ զգալիաւաբար այս անտարբերութիւնը նշմարած ենք, անտարբերութիւն մը՝ որ ստուգիւ պատիւ չի բերեր Զմիւռնիացւոյն:

Վարժարանին հարցաքննութիւններն աւարտելէ յետոյ ամսոյս 11ին տեղի ունեցաւ աշակերտաց վկայականաց բաշխումը շքեղ հանդիսով մը: Վարժարանին պարտեզը զարդարուած էր գոյնզգոյն դրօշներով. ամէն ազգէ խուռն բազմութիւն մը փութացած էր հանդիսատես ըլլալու՝ որոշեալ ժամուն երբ Աւստրիական Հիւպանտսարանի ներկայացուցիչն ռաք կուխեց հանդիսին վայրը, վարժարանին աշակերտաց կողմանէ սկսաւ աւստրիական քայլերգը՝ քա-

ռաձայն եւ ընկերակցութեամբ երաժշտական խումբի մը: Հանդիսականք յոռնկայս լսելէ յետոյ՝ երբ բազմած էին տեղերնին, թատերաբեմն ելաւ աշակերտներէն մին՝ Ստեփան Գասպարեան եւ կարգաց գերմաներէն ուղերձ մը ուղղեալ առ ներկայացուցիչն աւստրիական: Ասոր յաջորդեց գերմաներէն լեզուաւ ներկայացուցում մը, Յովսէփ Գեղեցիկի պատմութեանէն կտոր մը, Opéra de Mehul, զոր մեծ յաջողութեամբ ներկայացուցին եւ արժանի եղան ծափահարութեան՝ Ստեփան Գասպարեան, Կարապետ ճինկէօզեան եւ Պետրոս Եղիսեան աշակերտները:

Դուազաթատրէս յետոյ ներկայացուեցաւ իտալերէն լեզուաւ կատակերգութիւն մը, «Il topo in trappola», կատակերգութիւնն միշտ հաճելի է ժողովրդեան, բնականաբար ծափահարութիւնն ալ անպակաս: Սիշնք փոքրիկն Հրանտ Էմիրզէ՝ որ իւր դերը կատարեց մեծ յաջողութեամբ: Կատակերգութեան յաջորդեց հայերէն լեզուաւ «Փոքրիկ Գրագիւր», անուամբ կրթական ներկայացում մը, ասոր ալ յաջորդեցին անգղիերէն, գաղղիերէն երգեր եւ օսմաներէն խօսք մը: Հուսկուրեմն տեղի ունեցաւ վկայականաց եւ պարգեւաց բաշխումը: Հ. Ստեփան Հարունեան կարգաց մի առ մի աշակերտաց անուններն եւ անոնց դասերու մէջ ունեցած աստիճանները. յառաջ կը բերենք հոս միայն այն աշակերտաց անուններն՝ որոնք արժանի եղան պարգեւի եւ առաջին կամ երկրորդ կարգի վկայականի:

Բարի վարուց պարգեւի արժանի եղաւ Հաւարշ Պոստանձեան՝ Կ. Պոլսեցի: Գերապ. Հ. Արսէն Վ. Այտեան Միաբանութեանս Արքահօր կողմանէ ընդունեցաւ պարգեւ մը Միքայէլ Նայիկեան՝ վասն Գերմաներէն լեզուի: Գեր. Հ. Նիկողայոս Ծ. Վ. Ագեբեան՝ Առաջնորդ Կաթ, Հայոց Զմիւռնիոյ, Նուիրեց պարգեւ մը Ստեփան Գասպարեանի՝ վասն փութաշնուութեան:

Այտեան վանատան մեծաւորին՝ Վ. Հ. Կիւրեղ Վ. խոշառեանի կողմանէ Նուիրուեցաւ պարգեւ մը Կարապետ ճինկէօզեանի վասն հայերէն լեզուի:

Ա. Գասպարեան պարգեւի արժանի եղան Միքայէլ Նայիկեան, Ստեփան Գասպարեան, Թագաւոր Սարաֆեան՝ Աֆիւն Գարահիսարցի, Ժորժ Միքու, Պետրոս Հաջմէքիլեան:

Բ. Գասպարեան, Կարապետ Մոսկոֆեան, Գասպար Տէր Գառնիկեան, Կարապետ ճինկէօզեան:

Գ. ԴԱՄԱՐՆԻ, Թագուր Սարաֆեան, Տի-
գրան Գարարբղան, Հրանտ Էմիրզե:

Դ. ԴԱՄԱՐՆԻ, Տիրան Հիւսիսեան, Գանիէլ
Մատիկեան, Յովհաննէս Գալուստեան:

Ե. ԴԱՄԱՐՆԻ, Տիգրան Տիփանեան, Պօղոս
Գումարեան, Եփրեմ Թակորեան:

Գպրոցական այս շքեղ հանդիսին ներկայ
էին Զմիւռնիոյ կաթ. Հայոց Աւաջնորդն Գեր.
Ազգերան, Աւսարիական հիւպատոսարանի փոխ
հիւպատոս M. August Haller von Hallenburg,
հիւպատոսարանի առաջին գրագիրն M. Fortunat,
իտալական հիւպատոսարանի փոխ-Հիւպատոս
M. G. Mondello, իտալական Տանթէի ընկերու-
թեան ներկայացուցիչն M. Bonaventura G. Fra-
giacomo. Վ. Հ. Սերովբէ Վ. Ապտուլահանեան,
տեղւոյս ազգային քահանաներէն Տէր Մկրտիչ
Ասլանեան, Տէր Գարրիէլ Խաչատուրեան, լատին
կղերի քահանաներէն ինչպէս նաեւ. Լազարիտա,
Փրանկիսեան կրօնաւորաց եւ Ֆռէշնբուր Խումբ
մը, եւ ուրիշ լատին, հայ եւ յոյն հասարակու-
թիւններէն ստուար բազմութիւն մը:

Հանդէս վերջացաւ աւստրիական քայլ-
երգով, որմէ յետոյ հանդիսականք վանաւան
սրահն ելլելով, վարժարանին եռանդուն տեսչին՝
Վ. Հ. Վահան Վ. Մատիկեանի՝ իրենց շնորհա-
կալութիւնն եւ գոհունակութիւնը յայտնելէ եւ
վարժարանին յաջողութիւն եւ յարատեւու-
թիւն մաղթելէ ետքը՝ մեկնեցան տեղերնին:
Նոյնը կը մաղթէ եւ Հանրէն Ամբիոնի թղթա-
կէցը:

Յիշունիս 12 Յուլիս, 1902:

Ռ.

ԼԵՃՈՒՄԱՐԱՆԱԿԱՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ձայնական Ուսումնասիրութիւն:

(Ըրաւան-նիւնն)

§ III. ԳԻՏԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ:

263. Թուական անուններն կը բաժնուին
չորս դասակարգի, եւ են՝ բաց-ը-յի, դաս-ի-ն,
բաց-ի-ն եւ կոորդ-ի-ն:

Ա. ԲԱՑԱՐԶԱԿ ԹՈՒՄԱԿԱՆԻ:

264. Բացարձակ թուականները բանի մը
որչափ լինելը կը ցուցնեն եւ բարբառի մէջ
հետեւեալ ձևերով կը ներկայանան.

1. մէկ, -ի կամ -ու (մէկն երկուսն փ
նայր. Կէս-մէկն մէկն), 2. երկուք, 3. իրեք,
4. չորս, 5. հինգ, 6. վեց, 7. տաս, 8. տասն,
9. հար, 10. տասը, 11. տասնմէկ, 12. տաս-
վերկուք, 13. տասվերեք, 14. տասնչորս,
15. տասնհինգ, 16. տասնվեց, 17. տասնը-
տաս, 18. տասնըմէկ, 19. տասնըմեկ,
20. քսան, 30. առաս, 40. քառասուն, 50.
հիսուն, 60. վաթսուն, 70. եօթն, 80.
սաքսան, 90. տօխան, 100. հարիւր, 1000.
հազար:

265. Արագ համընդ ժամանակ փո-
խանակ քսան, առաս, քառասուն, յիսուն բա-
ռերը գործածելու, որոնք համեմատաբար երկու
լինելով՝ ժամանակի կրուստ մը կը պատճա-
րեն, Արաբներէն կը գործածէ համեմատած
ձև մը՝

10 = 20, 20 = 30, 30 = 40,
40 = 50, 50 = 60 (արտասանէ իբր Watsz) = 60:
Ըստ այսմ կը համարեն քսան մէկ, քսան եր-
կուք են, առ մէկ, առ երկուք, առ իրեք են,
քառ մէկ, քառ իրեք, քառ չորս են:

Այս համեմատելու երևոյթը շատ հետա-
քերքական է, որովհետեւ ուրիշ լեզուներու մէջ
ալ կը պատահի նա. այսպէս Յունարէն տրի-
սοντα = 30՝ եղած է տրιάς կամ այլ ար-
տասանութեամբ տριάς, ուր 30 մասնիկը ան-
հետացեր է, անշուշտ աւելի գիւրութիւն մը
պատճառելուն համար:

266. Թուական թանկան կը գոր-
ծածեն իրանական (Պարսկ. քրդերէն) թուա-
կանները՝ 1 = 1. 2 = 2. 3 = 3.
4 = 4. 5 = 5. 6 = 6. 7 = 7.
են են:

Ինչպէս կը տեսնուի բարբառի մէջ եթե-
նա, ուրեւ, ինչու հասարակ թուական
անունները գոյութիւն չունին, այլ անոնց տեղ
թուերէն համազօր թիւերը կը գործածեն:

267. Բացարձակ թուականները եւր իբր
ածական կը գործածուին գոյականէն առաջ կը
դրուին եւ անփոփոխ կը մնան, իսկ երբ առան-
ձին մնան իբր գոյական կը գործածուին եւ կը
Տղովուին առաջին Տղովման պէս -իով:

Բ. ԴԱՍԱԿԱՆ ԹՈՒՄԱԿԱՆՆԵՐ:

268. Բարբառի մէջ հայերէն լեզով
դասականները հազուադիւս են եւ եղածներն
ալ նորամուտ. կը գործածուին թուերէն դա-
սականները: Ուստի աւելորդ կը համարինք առաջ
բերել, Եւ արդէն ինչպէս ամէն դասաւարար-